ԳԼՈՒԽ ԺԷ
ՉԻՈՒ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Երբ օսմանցիները խաղաղությամբ էին ապրում, ավարում էին երկիրը. ավարեցին նաև Արզնի գյուղը: Թեպետ մարդիկ գաղթեցին, սակայն բոլոր անասունները կողոպտեցին, մինչև իսկ մի ուլ չմնաց: Գյուղում Դավիթ անունով մի մարդ կար, որ գյուղի տանուտերն էր: Սա մի ազնվացեղ ձի ուներ՝ կապույտ գույնով, բարձր հասակով, լայնասմբակ, երկայնապարանոց, փոքրագլուխ, արագավազ. սովորել էր նաև լեզու, անունն էր Դռաթ, ինչ որ Դավիթն ասում էր, ձին հասկանում էր: Այս ձին էլ տարան: Ձին բաժին հասավ մի կարսեցու: Սրա տունը բերդից դուրս էր: Ամեն օր մարդը հեծնում էր ձին և գնում էր հանդես-մրցության, ուրախանում էր իր ձիու արագավազության համար: Օրերից մի օր ըստ սովորության հեծավ ձին, գնաց զբոսանքի, տուն դարձավ, մտավ իրենց բակը, իջավ ձիուց, սանձը գցեց թամբին, մտավ տուն և ծառային ասաց՝ գնա ձիու թամբը վերցրու: Ծառան ելավ տեսավ, որ ձին բակից դուրս է եկել և հանգիստ գնում է: Իսկ ծառան գնաց, որ կանգնեցնի, ձին փախավ դեպի արևելք: Ծառան գնաց, պատմեց տիրոջը: Մարդը հեծավ մի այլ ձի և գնաց նրա հետևից, իսկ ձին արագացրեց ընթացքը: Մարդը չկարողացավ հասնել նրան, հետ դարձավ:

Իմաստուն ձին այդ գիշեր գնաց վեց օրվա ճանապարհ, հասավ Արզնի գյուղը և մտավ իրենց բակը: Դավթի մայրը գիշերը ելավ, որ եկեղեցի գնա աղոթելու, տեսավ ձին վրնջում է և ոտքերով դոփում է գետինը: Կինը վերադարձավ տուն, պատմեց որդուն: Դավիթը դուրս եկավ, իսկ ձին որպես բանական՝ պարանոցը գցած Դավթի ուսով, անդադար վրնջում էր: Երբ առավոտը լուսացավ, բոլոր գյուղացիները հավաքվեցին և Դավթին ասացին՝ ձին տար խանի մոտ և պատմիր նրան: Դավիթը ձին առավ տարավ, խանին ցույց տվեց և պատմեց եղելությունը: Իսկ խանը ասաց՝ քո արդար վաստակը եկել է քո ձեռքը, կառնես, կերթաս:

Թող ոչ ոք մեզ չծաղրի, այն բանի համար գրեցինք, որովհետև անասունները սիրում են իրենց խնամողներին ու տերերին, իսկ մարդիկ չեն ճանաչում իրենց երախտավորներին, ինչպես մեր ժամանակ գոյություն ունեցող աբեղաները: Քանզի երկու ամսվա իր գերությունից հետո ձին փախավ, եկավ իր տիրոջ մոտ, իսկ մենք երկու օր մեր մտքում չենք պահում մեր տերերի երախտիքը: Իսկ թուրքը, որ ձին տարել էր, օրեր հետո եկավ Արզնի, տեսավ ձին, տեղեկացավ, որ նույն փախած գիշերը եկավ Արզնի գյուղը: Այնուհետև միմյանց սիրելի դարձան Դավիթն ու թուրքը:

ԳԼՈՒԽ ԺԸ
ԵՐԿՈՒ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքերի սուլթան Մուրադ թագավորը գնաց, գրավեց Բաղդադը պարսիկների ձեռքից: Եվ մինչդեռ Բաղդադում էր, այնտեղից դեսպան ուղարկեց պարսից Շահ Սաֆի թագավորի մոտ, որպեսզի խաղաղության դաշինք հաստատեն իրենց միջև: Շահը նույնպես դեսպան ուղարկեց թուրքերի թագավորի մոտ: Սա մի մարդ էր, որին կոչում էին Ջաղաթա-Քոթուկ-Մահմադ խան: Հաշտություն ու խաղաղություն հաստատեցին: Պայման դրին երեսուն տարի մնալ խաղաղությամբ:

Երկու թագավորներն էլ իսկույն մեռան: Սուլթան Մուրադից հետո թագավորեց նրա եղբայր Իբրահիմը, սրանից հետո որդին՝ Մահմադը, սրանից հետո՝ որդի Խրանը (գուցե Սուլեյման Բ, կամ Ահմեդ Բ): Սրանից հետո՝ սրա եղբայր Մուստաֆան, որ այժմ գոյություն ունի և վարում է թագավորությունը:

Շահ Սաֆիից հետո թագավորեց սրա որդի Աբասը, սրանից հետո՝ Սաֆին, սրանից հետո Սուլեյմանը, սրանից հետո՝ Հուսեյինը: Սրանց պատմությունները հետո կանենք: Այսքան թագավորների ժամանակ խաղաղություն էր տիրում պարսիկների ու թուրքերի միջև, որովհետև 1088 (1639) թվից մինչև 1147 (1698) թիվը, որի մեջ ենք այժմ, հաշտություն ու խաղաղություն է եղել: Կոստանդնուպոլսից մինչև Սպահան առանց ահ ու երկյուղի երթևեկություն գոյություն ունի: